



3. ՀԱՐՈՆ ՈՒ ԲԱՐՈՆ

Հարոն ու Բարոն կընկերանան, գընկնան ճամպա: Հարոն աշ-
քերուց կուր կէղնի, ընդրա աշքեր ուր ձեռքի փետ կէղնի: Բարոն օր
սաղսալամաթ էր՝ չըմեն հաղուն կըսեր չընկերոջ:

— Քըզի հմալ տեղ հասո՞ւմ:

Կէրթան, կէրթան կը հասնին Ամրվենի սարի մեշեն, մութ վրեն
կիտա, կը կանին ծառիմ՝ տակ: Բարոն հմալ կը վախենա ու կը
դողա, օր էլ չէղած: Քնելու վախտ օր գիկա, Բարոն գելնա ծառի
վրեն, կըսե.

— Կուտին՝ թըղ քըզի ուտին, դու քոռ իս, աշխրեն բան չը
պակսի:

— Բա՛րո, — կըսե Հարոն, — դու չորի՞ն իմ պակասութեն չեր-
սով կիտաս. ըզի մաքդութեն չէ:

Բարոն ձեն չը հանե:

Դրո արե չըր պատի՝ մեկ լե՛ գիլանք կօռնան, ըզոց օռնոց քանի
կէրթա կը մոտենա: Բարոն օր ծառի վրեն էր՝ մեկ լե՛ թրը՛մպ,
գընկնա դետին, լեզուն կառվի, քիչ մնա լեղին պատուի, կը կպի
չընկերոջ:

Հարոն կըսե.

— Ըսկի մը վա՛խենա, մկա ես հմալ կէնիմ, օր գիլանք տես-
նան՝ թե էրկուս չինք, շատ ինք:

Օղորդ օր՝ դիւանք գիկան, կը կանին ծառից քիչ հեռու. ըդոց աչքեր կը պսպղան իմալ ճրագ: Քոմով կը կանին, կիշկին, կը տեսնան ծառի տկեն ուրանց աչքին շատ ձեռներ կէրևա, գիւաներու մեծ կըսե:

— Յոդի շատ մարդ կա, վա՛յ թե փորձանքի գանք, էրթանք մեր գործին:

Կըսե, կը թորկին կէրթան:

— Տեսա՞ր,— կըսե Հարոն,— իմալ խաբեցի զգիւանք: Օր դու ծառի վրեն էդներ, ըդոց քառեջ օր թրմպեր գետին, ընդոք գիմնեն՝ օր դու վախեցար, դիկեն քըդի լե, զիս լե կուտեն:

— Ընձի շըն կոնի,— կըսե Բարոն:

— Յորի՞ն շըն կոնի,— կըսե Հարոն:

— Գիւանք շըն կոնի ծառ բանձրնա:

— Ըպա քու վախն օր քըզի ցածրցուց, զէդի շըս ըսի՞:

Բարոն ձեն շը հանե: Կը պառկին, կը քնին: Լուս օր կը բացվի՝ գելնան յընկնան ճամպա, կէրթան, կէրթան, հմա անտեր մեշին նա՞ ծեր կա, նա՞ վեռջ: Օր կը բեզրին՝ կը կանին ծառի մե տակ, Բարոն վռազ ուրին կը թալե ծառի գլուխ, Հարոն կը մնա ներքև:

Դրո արև շըր պատի, արջեր մոթմոթոց ուրանց կը թալին մրջ մեշին: Արջ չի՞ն, մեկ-մեկ դմեշ: Բարոն ղըդոց ձեն օր կը լսե՞ թրմ՝ մպ, գընկնա գետին, լեզուն կառվի, քիչ մնա լեդին պատուի, կը կալի չընկերոջ:

— Ըսկի մը վա՛խենա, իմալ զգիւանք խաբի, զարջեր լե կը խաբիմ:

Օղորդ օր, արջեր գիկան, կը կանին ծառից քիչ մե հեռու, շըն քիշխնա մոտենա, շատ մարդ կէրևա ուրանց աչքին: Արջերու մեծ կըսե:

— Կա-չկա՞ շատ ին քոդի, վա՛յ թե փորձանքի գանք, արև էրթանք մեր գործին:

Կըսին, կը թորկին կէրթան:

— Տեսա՞ր,— կըսե Հարոն,— օր դու ծառի վրեն էդներ՝ պտի թրմպեր գետին, արջեր գիմնեն օր վախեցար, գիկեն քըզի լե, ընձի լե կուտեն:

— Ընձի շըն կոնի,— կըսե Բարոն:

— Յորի՞ն շըն կոնի,— կըսե Հարոն:

— Արջեր շըն կոնի ծառ բանձրնա:

— Օղորդ է, արջեր շըն կոնի, ըպա քու վախ օր քըզի ցածրցուց, զէդի շըս ըսի՞:

Բարոն ձեն չը հանե: Գեղնան յընկնան ճամպա, կէրթան, կէրթան, հմա մեշին նա՛ ծեր կա, նա՛ վեռջ, օր կը բեզրին՝ կը կանին ծառի մե տակ, Բարոն ձեռաց ուրին կը թալե ծառի գլուխ, Հարոն կը մնա ներքև, կը նստի, բողջեն կը փոե, հաց, սոխ, ժածիկ կը հանե, ձեն կիտա:

— Բա՛րո, յիջի հաց ուտինք:

— Չըմ ուտի:

— Յորի՞ն, տղա, շա՞նթցեր իս:

— Անթցեր իմ, հմա չըմ յուղի:

— Յի՛ջի, յի՛ջի, ախր ես մինակ չըմ կոնա ուտի, բրդուճ շէրթա ներքև:

Բարոն գիջնա, հաց, սոխ, ժածիկ անուշ կէնին, Հարոն կը ծառ-վընա:

— Բա՛րո, խուրբան, տար ընձի յախբուր:

— Չէ՛,— կըսե Բարոն,— վոլա իմ տեղից ժած չըմ յիդա, դու

մինակ գնա:

— Ի՛մալ էրթամ:

— Հանդե ձեն գիկա, զձեն բոնե ու գնա:

Հարոն զփետ կառնե ձեռ, կէրթա յախբրի ձեննուվի, կը հասնի, կուշտ մե ջուր կը խմե, էդ վախտ ծառին թառած հավք մե կըսե ըզոր:

— Յախբրի ջրով յերեսդի ցողվե, քու աչքեր կը բացվին:

Հարոն զերես կը ցողվե, աչքեր կը բացվին, սաղ-սալամաթ կը դառնա գիկա, կը տեսնա հանդե յընկեր յելի, նստեր է ծառի վրեն: Բարոն օր կը տեսնա՝ օր Հարո աչքեր սաղցեր ին, կը զարմանա, կըսե:

— Յա՛, քու աչքեր ի՛մալ բացվան:

— Բացվան, ըպա՛: Փա՛ռք իմ աստծուն, հավք մե ընձի սովըր-ցուց,— իմ յերես ցողվի՛ աչքերսի բացվան:

— Է՛,— կըսե Բարոն,— հըտ իրար էրթանք, ես լե ցողվիմ՝ իմ աչքեր յեվելի լուսովնան:

— Էրթա՛նք,— կըսե Հարոն:

Կէրթան: Բարոն օր ուր յերես կը ցողվե, աչքեր ուրին կը մթըն-դան, բան չը տեսնա:

— Հա՛րո, դու ընձի խաբեցիր, ես քոռցա:

— Օդո՞րդ:

— Հա՛, վո՛լա, բան չը տեսնամ:

Հարոն հավքուն ձեն կիտա:

— Հա՛վք, հա՛վք, մեռնիմ քըզի, ես աղեկցա, իմ յընկեր քոռ-ցավ, ճար ու ճամպե մե ցուցու, մեղք է, իմ յընկերն է:

Հավք ձեն չը հանե, կը թոնա, աչքից կը կորի:

— Մկա ի՞մալ էնիմ,— կըսե Բարոն:

— Աստված օղորմած է, ա՛ն զիմ փետ, էրթանք մեր ճամպեն:

Հարոն գընկնա ուր չընկերոջ թև, կէրթան ուրանց ճամպեն:
Կէրթան, կէրթան, կը հասնին տեղ մե, կը կանին, օր նստին ըռ-
հաթին: Ըդի մեշի մեջտեղ կէղնի, ծառեր շատ, շորս դեն մութ, ըսկի
արև չը կոնա ուր շող թալե ճղերու միջից: Բարոն կըսե:

— Հա՛րո, ծառվըցեր իմ:

— Քեյե էրթանք չախրուր:

Հըտ իրար կէրթան չախրուր:

Հարոն ղԲարոն կը կղըցու, էդի կուշտ մե ջուր կը խմե, չերես
կը ցողվե, բալթի աչքեր ուրին բացվին, հմա օգուտ շէնե, կը մնա
մայիֆ: Կը դառնան գիկան՝ օր ուրանց ճամպեն էրթան, մեկ լե
ձիու խրխինջ, մարդոց ձեն կը լսին: Քանի կէրթա՝ ձեներ կը մոտե-
նան:

Բարոն կը հարցու Հարոյին:

— Ավաղակներ կէղնին, մըզի պտի սպանին:

— Ըսկի մը վա՛խենա, գելերուց ու արջերուց պրծանք, մկա:
մարդո՞ւց կը վախենաս:

Վըր էս խոսքին՝ էդ էրկրի նեծրվան թագավոր ուր սիվտակ
ձիով կը կանի չառջև ուրանց:

— Ո՞ն իք, չո՛ւր կէրթաք:

— Մենք, թագավոր ապրած, էրկու ախպեր ճամպորդ ինք, ես
Հարոն իմ, իդա լե իմ պզտիկ ախպեր Բարոն է:

— Յորի՞ իք չընկի մեշեն:

— Մեր ճամպեն դիդավի կէրթա:

Թագավոր կըսե ուր մարդոց:

— Ըդոք իմ աչքին խալը մարդիկ կէրևան, բոնեք, ձեռքեր
ուրանց կապեք, տանինք հըտ մըզի, թալինք բոնատուն, տեսնանք
ըդոնք ո՞ն ին:

Թագավորի մարդիկ զըդոց թևեր կը կապին, կէցկին չառջև
ուրանց, կը բերին թագավորի քաղաք, կը թալին մութ բոնատուն
մե, հմալ ցուրտ ու թաց, օր շուն կը սատկի: Բարոն կըսե.

— Հա՛րո:

— Ի՞նչ է, Բարո:

— Մենք չո՛ւր ինք:

— Մ՞ըջ բոնատան:

— Մեր հալ ի՞մալ կէղնի:

— Աստված օղորմած է, հալբաթ դուռ մե կը բանա,— կըսե
Հարոն:

Քանիմ՝ օր յետև զըդոց կը տանին մըտ թագավոր: Թագավորի
կուշտ նստած կէղնի ուր մեկուճար աղջիկ, օր շուտիս-չը խմիս,
ինոր իշկիս, մեկ հուրի մալաք, աչքեր բալաք, չերես լուսնակ, ինք
քընց բամբակ սիվտակ: Աղջիկ օր կը տեսնա զՀարոն՝ խելք ուրին
կէրթա, կը ծոխ վըր տղին:

Թագավոր կը հարցու.

— Դուք էկեր իք՝ օր իմ դուշմընին խաբար-մաբար տա-
նիք, հը՞:

— Է՛, թագավոր ապրած,— կըսե Հարոն,— հմալ բան ըսե, օր
մարդու խելք կտրե: Մենք խեղճ-աղքատ տղեկներ ինք, կէրթենք՝
օր մըզի գործ մե ճարենք, զմեր ապրուստ էնինք:

— Չըմ ա՛վտընա,— կըսե թագավոր:

— Մ՛ա՛վտընա,— կըսե Հարոն,— մենք քըղի շընք խարի, գու-
զիս՝ մըզի կախե, գուզիս՝ թալ կրակ:

Թագավոր ծափ կը զարկե, հինգ-վեց մարդ մզըրխներով ներս
դիկան:

— Տա՛րեք, զէրկուսին լե կախեք:

Վըր էդ խոսքին աղջիկ կը դաննա թագավորին:

— Թա՛գավոր պապ,— կըսե,— ըդոց չորի՞ն կախել կիտաս,
ըդոք անմեղ մարդիկ կէրեան, թող ըդոց սաղ, մեր մոտ պահինք,
փորձինք, թե խալը դուս էկան՝ կը կախինք լե, կրակ լե կը թալինք:
Չուրի մարդուն չը փորձիս՝ մարդուն չըս հա՛սկընա:

Թագավոր ուր մեկուճար աղջկա խաթը չը կոտրե, կը թողե՝ օր
աղջիկ ըդոց պատմութեն յիմնա, փորձե, չիդա մեկ-մեկ թարիֆ էնե
ուրին:

Տղեկներ աղջկան ուրանց պատմութեն կենին, աղջիկ գիկա մըտ
թագավոր:

— Թա՛գավոր պապ,— կըսե,— ըդոց պատմութեն ըշտե հմլա-
հմլա է: Էն օր սաղ աչք ունի՝ չառեջ քոռ է էղի, էն օր սաղ է էղի,
քոռցեր է: Հրամանք էրե թըղ կոխման հեքիմն էն մեկի աչքեր բանա:

Հեքիմ զԲարո աչքեր կը բանա: Բարոն գընկնա աղջկա չոտներ,
կըսե:

— Իմաստո՛ւն աղջիկ, դու մեր պատմութեն դըռ չըր չիմցի,
մըզի աղատեցիր կախելուց, զիմ աչքեր բացիր, մկա ես չեմլի շատ
կը տեսնամ՝ քընց չառեջ, ու չը գինամ՝ ի՛նչ չերեսով իշկիմ իմ չըն-
կերոջ, ըռչա կէնիմ, օր մինակ ընձի կախիք, իմ չընկերոջ ձեռ չի-
տան:

— Զե՛լի, չե՛լի,— կըսե Հարոն,— մարդ շուրի շը փորձե ու
փորձվի՝ մարդ շը ճանչնա:

Հարոն մեկ թև, աղջիկ մեկ թև կը բռնին, զԲարոն կը հանին
չոտքի: Աղջիկ կէրթա մըտ թագավոր, կըսե ուր մտադրութեն, թա-
գավոր կը խնդանա, խաբուլ կէղնի: Հարոն կը դառնա աղջկա իրիկ,
Բարոն կը դառնա քավոր:

Էրկնքեն իրեք խնձոր չիջավ, մեկ Հարոյին, մեկ Բարոյին, էն
մեկ լե թագավորի աղջկան:

